№1171
1928 №625
ՅԵ. ՀՈՒԼՅԱԿՈՎԱ

# ՓՈՔՐԻԿ ՆԵՐԿԱՐԱՐՆԵՐ

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА

Զ. Վեսպֆալեն
ր. Վ. Նորենց



891.71Ս
Տ-95

ՊԵՏՀՐԱՏ



# ՓՈՔՐԻԿ ՆԵՐԿԱՐԱՐՆԵՐԸ



Պետիկը տեսավ մի ներկարար՝
Պատն էր ներկում նա վեր ու վար.
Մըտքովն անցավ,—«արի մեկ օր
Ես էլ դառնամ տներ ներկող»։

891.71-93



Հետո քաշեց սեղանը մեծ
Ու բարձրացավ վրա[illegible]ց.
Տուն մաքրելու խոզանակը
Վրձին արեց չար զավակը։



Տանը՝ փոքրիկ պահարանից
Նա մի սրվակ թանաք հանեց,
Թանաք, որով գիր են գրում,
Նա շուռ տվեց մի դույլ ջրում։

24 JUL 20
5494



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
59086-66

Յեվ քշտելով սրունք ու թև
Գործ սկսեց հեշտ ու թեթև.
Պատի վրա նկարեց մի
Ձիուն հեծած մեր պատանի։

Հետո վրձինը ցած բերեց,
Մի մեծ, շատ մեծ աչք նկարեց։







Բայց տխրեց նա մի ժամանակ,
Վոր ներկարար ինքն ե մենակ․
Ու կանչելով ձայնով մեծի՝
Իր յեղբորն ել դրեց գործի։

Կարճ ե յեղբայրն, բայց ինչ անի,
Թող նկարե ուր վոր հասնի․
Ու ներկեցին նկարեցին,
Ճերմակ պատերն սև արեցին։



Ձեռքը հմուտ ներկարարի
Փոքրիկ քույրն ել ընկավ գերի·
Ու շորերը մաքուր, պայծառ՝
Վրձինի տակ սև շոր դարձան։



Տան շնիկը մաքուր դընչիկ
Սենյակ մտավ՝ պոչը փընջիկ·
Նրա դունչն ել գրոտեցին,
Մրոտեցի՜ն, մրոտեցի՜ն։

Չմնացին էլի յերկար
Այդ յերկուսը քաջ ներկարար.
Պետրիկն ընկավ սեղանից վար,
Տունը լցրեց աղմուկ, հավար։



Այդ աղմուկի, ձայնի վրա
Մենակ մտավ մայրը նրա



Ու դուրս քաշեց հեզ ու հլու
Բոլորին էլ լողացնելու։

ՀՀ Ազգային գրադարան
NL0398412

ՊԵՏ. ԿՍՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР

5494

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

32524

Н ИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՍԽՀ
ՊԵՏՀՐԱՏ

Գրառեպվ. № 546 (բ) պատ. № 1891 տիրաժ 3000 օր.
Պետ հրտ. № 681, Հայպոլիգր. 2-րդ տպ., Յերևան